

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիւնիկ»,
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ղր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 25

Տր. 8
ՏԱՐԵԿԱՆ... 15
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6

Փ Ի Ւ Ն Ի Կ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 9 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 26

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիշգիխճի)

Ա.

Ա. Տարիները

(Շար. ԻՅ. քիւեմ)

Ամառնային օր մը, Պէօյիւքտէրէ շրջագայութեան ելած էին Թընկըրգերգաստանին անդամները: Կարայի հըրճուանքին ու զմայլանքին չափ չ'կար. կապուտակ ծովին ու սպիտակաբաշն ալիքներուն սիրահարն ու մոլին էր. ճամբան, երբ Պէօյիւքտէրէյի ծովափը կը պտըտէին, ստնտուին ձեռքը պինդ մը բռնած, կ'արգիլէր քայլ մ'առաջ երթալ, կ'ստիպէր զանի տեղը մնալ, թոյլ տալ իրեն որ դիտէ, յագենալու չափ խորատուզէ իր նայուածքները հեռուն, Վսսիօրի մերթ ասիական մերթ եւրոպական եզերքներուն վրայ: Այս-

պէս կը նայէր երկա՛ր, կը սեւեռէր բերբըրը մէկ կէտի վրայ անհուն ծովին տարածութեանը մէջ. հոն, այնպէս կը մնար երազուն, մինչև որ ստընտուն զինք վերակոչէր, ցոյց տալով իրեն մակոյկ մը, առագաստանաւ մը կամ երբեմն ալ շոգենաւ մը. այս վերջիններուն դրօշակները զննած ու միտքը պահած էր, այնպէս որ, հեռուէն հազիւ երեւիլ սկսող շոգենաւի մը դրօշակն իսկոյն կը մկրտէր ֆրանսական, յունական, անգլիական, օսմանեան, ևն, մակդիրներով:

Նոյն Պէօյիւքտէրէյի ամառնային շրջագայութեան օրը, Կարա, առիթ գտնելով իր ստնտուին ձեռքէն պրծելու, իրեն համառի հելլենուհի մը հետն առած, կը հեռանայ, կը բարձրանայ Պէօյիւքտէրէյի կռնակի բլուրն 'ի վեր. հոն, մանկային անզուսպ իղձով մը, ու երկար ատենէ 'ի վեր արգիլուած պտուղի մը համն առնելու բնագէն մղուած՝ հելլեն աղջկանը թեւը մտած, բլուրին գագաթը կ'ենէ, յետոյ թեւ թեւի տուած, երկուքը միա-

օին, աւազուտ բլուրն 'ի վար կը սահին կ'իջնեն մինչև ստորոտը: (1)

Կարա շատ կը վախնար մուրացկաններէն, որոնց միայն մէկուն հանգիստմը կը բաւէր զանի սրտաբեկելու. ո՛չ միայն կը վախնար ու կը սոսկար, այլ և կ'ատէր մուրացիկները, զորս անարդկութեան արաստով որակած է ապա: Կ'երևի թէ այդ սոսկումին ու ատելութեան անջնջելի հետքը մնացած է Երկաթի սրտին մէջ մինչև իր վերջին օրերը: Իր ձեռագիրներուն մէջէն — զորս հաւատարիմ աւանդապահ, մասունքի պէս կը պահէ տարաբաղդ Մայրը Տիգրանի — կը քաղենք հետեւեալ ո՛չ նուազ ուշագրաւ կտորները, Ֆրանսերէն գրուած, և հայերէն բառական թարգմանութիւնը կը հրատարակենք ստորև.

Կ'ստե՛ս ժողովուրդն իր կոչսութեան, իր նախասինկերուն ու իր կեղոսութեան հաւար:

Կ'ստե՛ս մեծերն իրենց անբարսաւնութեան ու արհաւարհանիին հաւար:

Կ'ստե՛ս քաղցեմի դասակարգերն իրենց եսասիրութեան, ու իրենց յարուսին հաւար առեւտուրին ու գործերուն, զորս իրենց աստուածը կը շինեն:

Կը մնաւ ես, ու կ'ստե՛ս ինկզիսն ալ, երբեք ծնած չ'ըլլալուս հաւար աւելի հաշտարոյ:

Քանի՛ մեծնար, այնքան կածէր իր հետաքրքրութիւնը գիտնալու, հասկընալու ամեն բան. յաճախ մօրը գըլխուն կը տեղար հարցումներու կարկուտ մը, որոնց տակ մայրը շուարած,

(1) Այս մանկային անմեղ խաղերուն ու օրերուն հետեայի յիշատակը յանկարծ կը վերարթննայ Տիգրան Երկաթի առկայծ յիշողութեան մէջ, երբ Մեծ կղզին, մահուան անկողնին մէջ, ծանրակսկիծ մայրը՝ սնարին մօտը նստած, իր մահամեծ անդրանկին նակիցին պաղ քրտնիկը կը սրբէր: Տիգրան՝ կարծես հին օրերու քաղցրիկ յուճովը վերակենդանացած՝ կը պատմէ հոն իր յուսահատ մօրը Պէօյիւտեքիի պոյսն ու բլուրն 'ի վար հեղեղուհիին հետ սահ ի սահ եզրը:

կ'ստիպուէր ա՛լ աւելի զարգանալու, իր հմտութեան պաշարը ճոխացնելու, որպէս զի կարող ըլլար գոհացուցիչ պատասխաններ գտնելու իր փոքրիկ Կարայի անվերջ հարցումներուն, որոնք օր օրի կը բազմապատկուէին: Երկինքին աստղերուն, ծովին, շրգենաւներուն, հանրային մեծ շէնքերուն եւ իր մանկային ուշադրութիւնը լարող ուրիշ տեսարաններու վրայ միշտ կը հարցախուզէր իր մայրը, կ'ուզէր թափանցել ամեն բանի գաղտնիքը, խորը կարճ ու կցկտուր պատասխաններով ալ չէ՛ր շատանար, բացատրութիւն կը պահանջէր ու մանրամասնութիւններ:

(Շարունակելի) Ս. ԲԻԻՐԱՏ

Ահաւասիկ այն գեղեցիկ բանախօսութիւնը զոր Գահիրէի Հայ-Լսարան-Ընթերցասուն Ընկերութեան Կիրակի օրուան Լսարանին մէջ արսասանած է համակրելի Ազն. Օր. Մառի Պէյերեան:

ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ

Ամենու ծանօթ նմարսութիւն մըն է որ ժողովուրդի մը մտքին ու արտի մէջ ինքնագիտակցութեան եւ արժանապատւութեան զգացումը արթնցողը՝ միայն ու միայն զարգացումն է:

Չայս փաստելու համար ինչո՞ւ հեռուները երթանք. ահա՛ մեր աչքին սակն ունինք Քէլլահ ժողովուրդը: Շունէ մը աւելի զրկուած եւ անարգուած այդ խեղները, անգիտակց իրենց սեփական իրաւունքներուն իբրեւ մարդ, հետեալաբար եւ անկարող բողոքելու, կապրին, կամ աւելի միեղը կեանքը կը քաշուեն իրենց նմաններէն արհամարհանքի ու նողկանքի տեսնելով

միայն... Եւ այս ժամը վիճակը պիտի
 տեսնէր ցորչափ սգէս մնան անոնք, ան-
 կարող ըմբռնելու թէ՛ ի՞նչ է իրենց
 գոյութեան նպասակը, ի՞նչ պարսակա-
 նութիւններու փոխարէն ի՞նչ պահանջ-
 ներ ունին ազատ, յարգուած, ու պատ-
 տաւոր ապրելու համար իբրեւ մարդ
 ե՛ւ իրենք աշխարհի վրայ: Զարգացում
 ըսելով սակայն, պէ՛տք է՛ հաս-
 կրնալ այն երեւութական խաբուսիկ
 փայլը, մի քանի օտար լեզուներ
 թութակի պէս խօսելու, հոյա-
 կապ հեղինակներէ գողցուած մի քա-
 նի հարեանցի տեսութիւններ ու լաւ չը
 մարտուած գաղափարներ ըստ պատշա-
 ճին պարզելու դիրութիւնը. ընդհա-
 կառակը շատ անգամ վնասակար եւ
 անտրիչ են ազոնք, վասն զի ինչ որ
 թերեւ բնութիւն մը ունի, երեւնալու,
 փայլելու համար միայն ընդունուած եւ
 ընդօրինակուած կեղծիք մը, անելի
 նիւթը, *կաշկոտներ* կը դառնայ ժողո-
 վուրդի մը բարեփն... Իմ խօսքս խո-
 ռունկ ու լուրջ, պարզ բայց հաստատ
 զարգացման վրայ է, որը միայն կա-
 ռող է առողջ ու կենսապից պահել
 ժողովուրդի մը բարոյական ուժերը:
 Եւ այն ասէն միայն ժողովուրդ մը
 մեծ է իսկապէս, երբ կատարեալ Տէր
 ու գիտակից իր անձին՝ բարձր կը պահէ
 իր արժանապատուութիւնը:

Զարգացումը ոչ միայն բարոյա-
 պէս բարձրանալու, եւ ազնուանալու
 միջոցն է, այլ միեւնոյն ժամանակ
 մեր նիւթական շահերուն, ապրելու
 կենսական պայմաններուն համար ան-
 հրաժեշտ պէ՛տք է՛ մըն է, քանի որ նա՛
 կարծեցնէ մեր ներքին — մարդուն մէջ
 ինքնագիտակցութիւնը. եւ առանց ինք-
 նագիտակցութեան ըսինքն արդէն թէ՛
 անկախ, պատուաւոր, ու երջանիկ
 կեանք չկայ...:

Եթէ այսօր բանոր դասակարգը,
 որ ժողովուրդի մը մեծամասնութիւնը
 կը կազմէ, զրկանքի ու թշուառու-

թեան մէջ կը սապկուի, իր չարաչար
 աշխատութեան փոխարէն գրեթէ ոչինչ
 ստանալով իբրեւ վարձք, զո՞հ անխիղճ
 գործարանատէրը անյազ շահասիրու-
 թեան, պատճառը իր արդար իրաւունք-
 ներուն անգիտակից ըլլալը չէ՞ արդ-
 եօք...:

Այդ դասակարգին մէջն ալ խլր-
 տումները սկսեւ են սակայն... բան-
 տուական ժողովներ կը սարճուին, ի-
 բրանց ու պարտոց վրայ ազատ ու
 կրակոտ հառեր կը խօսուին. գործա-
 դուլ տեղի կուենայ, ուժգին բողոք-
 ներ կը պայթին երբեմն գործարանա-
 տերերու բացարձակ ու լիբր գողութեան
 դէմ. գողութիւն մը՝ որ անպատիժ կը
 մնայ... Ի՞նչ մտածել ուրեմն սիրող
 օրէնքներուն վրայ... երբ կը տեսնենք ե-
 բեմն թշուառ մը, որ անօթութեան քան-
 ջանքէն, կեանալու պէ՛տքէն մղուած
 հաց մը կը գողնայ. եւ անա՛ ընկե-
 ռութիւնը կանուանարկէ, խօսքի կը
 պատժէ, կը բանտարկէ, կը չարչարէ
 գայն, իբրեւ մարդկութեան մէկ վնա-
 սակար սարք... Մինչ անդին ամեն
 օր մեր աչքին տակ ունինք նոխարեան
 ու շուքարեան մէջ յղիացած հա-
 ռուսը, որ աղֆաթին նակիթն ֆրֆնէր,
 արեան գինը կը շահագործէ իր արդէն
 լեցուն քսակը լաւ եւս պարտելու
 համար, անոր արդար իրաւունքը կի-
 րացնէ անխղճաբար... Եւ հրէ-մար-
 դուն համար պատիժ չէ՛ ստանալու
 ... ժամ՛եր երեւոյթ...:

Բայց հակառակ այդ երբեմն բա-
 ւական զօրաւոր շարժումներուն, գոր-
 ծառններու ինքնագիտակից խումբերը
 սակաւին իրենց յարուցած արդար դա-
 քին ու եւ է նպաստաւոր լուծում չեն
 ստացած, որովհետեւ անոնք փոքրամաս-
 նութիւնը կը կազմեն... Ի՞նչ նշանա-
 կութիւն ունին քանի մը խմբակներ՝ ան-
 խիղճ գործարանատէրերու մօտ, երբ
 անդին անագին մեծամասնութիւնը
 կայ, որ սակաւին զգիտութեան քանձը

խաւարին մէջ առ խաւարի կուրօրէն կը քալէ կեանքի մէջ, ենթակայ ամենէն անտանելի զրկանքներուն:

Եւ ճնշեսական նկունք, մարդ էակին հոգւոյն ու արտին մէջ ինքնագիտակցութեան եւ արժանապատուութեան զգացումները խեղդող է՛ն հօր եւ կարող միջոցն է դժբաղդաբար. զայդ գիտեն անօրէնները, որոց բնաւ գործին չգար զարգացման ու լուսաւորութեան յաղթական մոտեցր գործաւորական խաւերուն մէջ. . եւ գուցէ հիշող այդ պատճառաւ կը ննչեն ու կը նզովեն ճնշեսապէս խեղները, որպէսզի միջոց չունենան անոնք ուշադրութիւն դարձնելու իրենց բարոյական ներքին մարդուն վրայ. . :

Ինքնագիտակցութիւնը կը սուրվեցրնէ ուրեմն ժողովուրդի մը արհամարհել բռնութիւնը, ուժով մաքաւիլ ամեն անոնց դէմ, որոնք կաշխատին գողնալ իր սրբազան իրաւունքները. . : Արդար օրէնքը նուիրական է, եւ ով որ չհպասակիր արդար օրէնքին, նա անարժան է պատուաւոր քաղաքացիի անունը կրելու: Բայց երբեմն օրէնքէ դուրս՝ քննական օրէնքներ ալ կան, զօրաւորին օրէնքը, եւ անհա՛ ասոր դէմ միայն ժողովուրդ մը ոգի բռն մաքաւելու, ազնուօրէն, դիւցազնօրէն, վեհօրէն կռիւ մղելու սուրբ եւ անբռնաբարելի իրաւունք ունի վերջնականապէս ձեռք բերելու համար արգարութիւնը. . . որը երեսակայական աշխարհներու մէջ միայն գոյութիւն ունի կրօնէն, շատ անգամ, գուցէ գեղեցիկ բառ մը այսօր՝ որ վաղուան շօշափելի ու դրական իրականութիւնն է սակայն. . . :

Իրաւունք մը պատշապանել. . . դա վստահ գործ է. բայց գաղափարին վստահութեան համահաւասար վստահ պէտք է ըլլայ եւ անոր պատշապանութիւնը: Ո՛չ քաղաքացի, ո՛չ մեքենայութեամբ, ո՛չ սոսր՝ եւ անուանակիչ միջոցներով որոց

քաղաքացիականութիւն անունը կուտանք: Ասոնք կը նուաւսացնեն գաղափարին մեծութիւնն ու բարձրութիւնը: Չհետեւինք հէզոնիքներու առածին թէ՛ «նպասակը՝ զմիջոցները կարգարացնէ». ասիկայ ամեն բանի չյարմարի. . . : Մաքուր, վստահ սուրբ բաներու հետ, մաքուրութեամբ, վստահութեամբ, սրբութեամբ պէտք է վերաբերուիլ. . . : Գիտնանք քաղաքացի, բաց կուրծով, հրեմարտութիւնը իր փառաւոր մեղքութեան մէջ պարզօրէն պատշապանել:

Պարզութիւնը պատշապանել է: Չ՛սանք վստահ ու ինքնին արդէն շատ գեղեցիկ նշանակութեան՝ քաղաքացիական կեղծ շարք. այն աստե՛ն նա պիտ նմանի այն գեղեցիկ կնոջ որ իր բնական վիճակին մէջ հրաշալի էր, համակ շող ու բոյր. եւ անհա, արուեստական շարքով, սնգոյրով ու ծարիրով կը ծեփէ իր դէմքն ու աչքերը, եւ կը կորսնցնէ այդու իր բնական անուշ ու գոգոսիկ հրապոյրները: Գուցէ դարուս պահանջը սարբեր ըլլայ. ուղիղ համբան չէ՛ շատ անգամ որ նպասակին կը սանի. ընդհակառակն ուղղութիւնը գուցէ նպասակէն շեղեցնէ, մոլորեցնէ, հեռացնէ զնեզ. գուցէ իյնանք, առանց յաղթանակել Տալու գաղափարը. ոչինչ, այդ իյնալը արդէն բարձրանալ է, եւ յաղթուիլը՝ յաղթանակել. որովհետեւ ժողովուրդի մը վրայ ոչինչ այնքան խորունկ տպաւորութիւն կրնայ գործել, որքան գեղեցիկ ու բարձր դասերու գործնական օրինակը. . . : Եւ եթէ անկարող ըլլանք մենք մեր ձեռքով անոր երջանիկ կեանք մը ապահովելու, գէթ ազնիւ նկարագիր մը տուած կրըլլանք անոր, որով կրնայ օրին մէկը մեծ ժողովուրդ մը ըլլալ, եւ ինքն իրմով պատշապանել իր դասն ու իրաւունքը:

Այսօր գոյութիւն ունի ընկերակալականութեան պատշապան գաղափար. անհաւասարութեան ու զրկանքի դէմ

մղուած կոխ մը դարձեալ. խուլ կոխի մը սակայն առանց ձայնի, առանց աղմուկի, առանց արեան ու կոսորածի. բայց ոչ նուազ անարկու եւ սպառնալից նոյն իսկ այն հանդարտութեամբ որով կը գործէ... Սա կը նմանի ամպոս երկնի մը ուր երբեմն կայծակներ լռին կը փայլասակեն, եւ հուսկ յետոյ ամպերը յանկարծ կը պատռին, կայծակները կորոսան, երկինք ու գետին իրար կանցնին, անձրեւ ու կարկուտ իրարու կը յաջորդեն, սարսափ եւ արհաւիրք ամէն կողմ... եւ անաւարտերի կասաղութիւնը տակաւ առ տակաւ կը հանդարտի, կը մարի, ամպերը կը պարզուին, ու երկինքը կը ժպտի մեզ իր անուշ կապուտին մէջ արեւուն շողոքուն նառագայթներով պնդուած... :

Հաւասարութեան գաղափարին յաղթանակը գուցէ դարերու գործ է, բայց անվրէպ է, որովհետեւ դա՛ արդիւնք է լուրջ ու երկար խորհրդածութեանց, հաստատուն ու տկուն համոզման:

Քաղաքակրթեալ ժողովուրդներու մէջ, հայ ժողովուրդը գուցէ ամենէն անելի մնացած ըլլայ զգէտ. եւ յանցանքը իրը չէ... Դարերէ ի վեր կրելով սրբկութեան շրթան, սառապանքի մարտիրոսութիւնը, երբէ՛ք միջոց ունեցած է իր բարեբուն ազնուացման ու նկարագրին բարձրացման վրայ ուշ դարձնելու: Ընդհակառակն սրբկութիւնը զմարդ կը ձգէ: Ի՞նչ իրաւամբ անկախ եւ ազատ նկարագիր, ինքնագիտակցութեան ոգի փնտել սրուկ ժողովուրդի մը մօտ՝ որ մէկ կողմէն սուր ու կրակ, միւս կողմէն ճնշեալ սխուր պայմաններ կը նգմեն ու կը ննեցնեն. հապա գաղթականութեան անուելի ցաւերը... մոռցա՞նք արդեօք... :

Իրա՛ւ է, այսօր մեր ժողովուրդն ալ կը խլրտի, կը նդվզի... բայց միթէ ինքնագիտակցութեան ու խորունկ հա-

մոզման վրայ կրթեալ շարժում մըն է դա... չէ՛... հոս՝ միսն է որ կը բողոքէ, ոչ թէ՛ հոգին: Չարչարանքի եւ ննուներու չափազանցութիւնն է որ կը մղէ զինքը կասաղի գայրութի մը բունն ու անխորհուրդ յարձակումներով բողոքելու բռնութեան եւ հարսահարութեան դէմ:


Թող փճփր ինչ հանգիստ սան իրեն, թող ներկայ սխուր պայմանները փոխուին, եւ անա պիտի տեսնենք ժամանակի ընթացքին հետ անցեալի դառն յիշատակները ջնջուած, այն վաւճառն գգացումները թմրած, եւ մեր ազգը դարձած՝ ամենէն գոհ եւ ամենէն հանդարտ ժողովուրդը... Միթէ խնդիրը վերջացա՞ծ է սակայն... ինքը սրուկ ըլլալէ դադրա՞ծ է, ազա՞տ է ալ բոլորովին... չէ՞ որ բռնակալ իշխանութեան մը լուծին տակն է դարձեալ, որ օձի պէս խորամանկ, անուր միամտութենէն օգտուելու եւ զինքը խաբելու համար սանձը քիչ մը թոյլ կուտայ, ժամանակէ մը անելի պիտի սեղմելու համար... Կը կրկնեմ, համոզմամբ չէ որ մեր ժողովուրդը մեծաւ մասամբ կը կուռի, վասնզի ով որ համոզման վրայ կրթեալ կը գործէ, երբէ՛ք կը թուլանայ, երբէ՛ք կը կասի, երբէ՛ք կը խաբուի, այլ կը յառաջանայ անյողողոզ աչքերը անթիթ յառած նպատակին: Փոյթ չէ՛ թէ հանապարհի դժուարութիւններէն, քարերէն ու փուշերէն վիրաւորուի նա. օր մը անվրէպ կը հասնի նպատակին. վասնզի համոզում եւ կամք, անա ժողովուրդի մը համար յաջողելու միակ գաղտնիքը... Ըսի վերը թէ՛ մեր ազգին ներկայ այս սխուր նգնածամին մէջ, բնական է որ Մայր-Հայրենիքէն մեծ բան մը չենք կրնար սպասել, եւ իրաւունք ալ չունինք սպասելու, բայց Արեսասահմանի հայութիւնը մանաւանդ, անհուն ազատութիւն եւ մէկէ անելի միջոցներ ունի զարգանալու եւ յառաջդիմելու համար. վարժարաններ, թեր-

թե՛ր, ընթերցարաննե՛ր, լսարաննե՛ր . . .
 Ի՞նչ կուզենք՝ սակաւին . . . : Եւ այսօր՝
 յորում պատիւը կունենամ խօսելու սոյն
 լսարանին մէջ, ինձ քաղցր պատճառ-
 նութիւն կը համարիմ իբրեւ ժողովուրդի
 մէկ գաւազը, իմ անկեղծ շնորհակա-
 լիքս յայտնել այն ազնիւ երիտասարդ-
 ներուն, որոնք յառաջդիմութեան սի-
 րովն ու ոգովը վառուած՝ իրենց անձ-
 նական զբաղումներն ու հանգիստը կը
 գոհեն շատ անգամ գործը շարունակե-
 լու եւ հասցնելու համար իր արժանա-
 տը բարձրութեան եւ այդու՛նոր զարկ
 մը կուտան ժողովուրդին զարգացման-
 ինչ որ պիտի արթնցնէ, ինչպէս ըսի,
 ինքնագիտակցութիւնը անոր մեքին ու
 արտին մէջ, եւ այդու պիտի բարեփոխե-
 ներկայ դառն վիճակը . . :

Եւ այս արեան ու սուգի սարի-
 ներուն մէջ մեր ազգային աննկուն կո-
 ռովին մէկ գլխաւոր յակահիւր չէ՞
 արդեօք մտածել դարձեալ բարոյական
 սնունդի մասին, մինչ մեզմէ շատերը
 նիրպական սնունդէ ալ գուցէ զրկուած
 են . . . : Ահա՛ Եգիպտոսը, Պուլկարիան,
 Ֆրանսան եւ Ամերիկան . . . : Ի՞նչքան
 յիսուր են ներկայ ցաւերուն ու դառ-
 նութիւններուն մէջ մեր ուրիշ Հայ կեդ-
 ղոններու ներքին երկպառակութիւններն
 ու կռիւները, որոնք մեր արդէն սպառ-
 ուած ուժերը բոլորովին ջլասելու հան-
 գամանքն ունին, այնքան ալ մխիթա-
 րական ու կազդուրիչ է տեսնել Ամերի-
 կայի արի Հայ ժողովուրդին միութե-
 ան եւ համերաւելութեան ոգին մի՛՛շ
 եւ ամեն բանի մէջ, անոր զարգացման
 եւ յառաջդիմութեան սէրը: Հպարտ եւ
 երջանիկ արդէն իրենց անձին գիտակ-
 ցութեամբ, անոնք համոզուած են թէ
 հզօրագոյն ձայնը ժողովուրդինն է օր
 մը. թէ ամեն բան կանցնի, կոչնչանայ,
 միայն ժողովուրդը չմեռնի՛ր, նա
 կապրի երջանիկ երբ հասցնէ իր ինք-
 նագիտակցութիւնը եւ արժանապատու-
 ութիւնը արժանատի բարձրութեան: Գու-

ցէ ասիկայ դարերու գործը պիտի ըլ-
 լայ. ամբողջ ժողովուրդներու զարգաց-
 ման եւ լուսաւորութեան խնդիրը թեթե-
 ու հեշտ բան մը չէ՛ հարկաւ, բայց ո-
 չի՛նչ, յաղթանակը ապահով է. ժո-
 ղովուրդներ պիտի յաջողեն իրարու,
 եւ մենք՝ այսօրուայ զրկուածներու ու
 դժբաղդներու՝ պիտի ապրինք մեր եր-
 ջանիկ սերունդներուն մէջ, նաեւ կեղծ
 գերագոյն վայելքը *Հաւասարութեան,
 Եղբայրութեան ու Սիրոյ:*

ՄԱՌԻ



ԲՈՒՑԷ ՎԵՌՊԱԼՐ

«Փրկիկ»ի խմբագրութիւնը ցաւե-
 լով կը ծանուցանէ թէ Տիար Եսուարդ
 Թուրուանի յանձնած *Բոուս Վեռ-
 պաշը*, — որուն հրատարակութիւնը յե-
 տաճառ էրնք ինչ ինչ դիրքմբռնելի
 նկատումներով — պիտի վերջապէս ե-
 րեւի թերթիս յաջորդ թիւին մէջ, եթէ
 մինչեւ առաջիկայ շաբթուան չորեք-
 շաբթի կամ հինգշաբթի օրը, ամսոյս
 13ին կամ 14ին, տեղական հայաթեր-
 քերէն մէկուն մէջ չը հրատարակուի
 անցեալները «Արշալոյս»ի մէջ երեցած
 Գեորգ *ԵՔէնի* (անցած անգամ այդ
 անուան վրայ Տ. մը կամ Պ. մը կցելու
 մոռցած ըլլալնուս ՚ի պատիժ) Զա-
 վուեանի սուտ ու վառ յողուածին
 հերժումը, նոյն իսկ ծանօթ *Բոուս Վեռ-
 պաշով* շահագրգռուող մեր բարեկա-
 մին կողմէն, որուն պարկեցութիւնն
 այդ կերպով ապացուցուած պիտի ըլ-
 լար միանգամ ընդ միշտ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Նիւթերուն առատութեան ու տեղին անձ-
 կութեան պատճառով որեցանք յաջորդին յետաճել
 մեր Պատ. աշխատակից Տիար Մ. Տաւաթեանի
 «ՅԱԻՆՆՈՒԱԾԻՆ ԱՌԹԻՒ» յօդուածը:

ՔՐՈՆԻԿ

— ԻԶՄԻՐԻ ՄԱՐՍԵՐԸ ԳՐԱԻՈՒՄԸ —
 Ամսոյս 5ին Բիւթէրի հեռագիր մը Բա-
 րիզէ կը ծանուցանէ թէ Գայեար ծո-

վակալը ձեռք դրաւ Իզմիրի մարտն ուն վրայ:

— ԳԵՐՄԱՆ ՄԱՄՈՒԸ. — Դարձեալ ամսոյ: 5ին Պէրլինէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Գերման մամուլը ծայրագոյն դժգոհութեամբ կը դիտէ Սուլթանը կարգի բերելու համար Փրանսայի կողմէն ձեռք առնուած սրուշումը:

— ՓՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՉ. — Ամսոյս 4 ին Բարիզէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Խորհրդարանը 77ի դէմ 305 ձայնով վստահութեան քուէ տուաւ կառավարութեան Պ. Տէլզասէի ճառէն ետքը, որ կը հաստատէ կառավարութեան որոշումը՝ պաշտպանելու Փրանսայի բարոյական, սնտասական ու նիւթական շահերը, եւ պահովելու Թուրքիոյ մէջ պաշտպանութիւնը ֆրանսական կրօնային միաբանութեանց ու կրթութեան:

— Ն. Բ. ԽՏԻՎԻՆ ՄԵԿՆՈՒՄԸ. — Ն. Բ. Խտիվը մեկնեցաւ Գահիրէ ամսոյս 7 ին հինգշաբթի առաւօտ ժամը 7. 30 ին մասնաւոր կառախումբով: Ն. Բ. Խտիվը, անցքին վրայ խանգավառութեան առարկայ եղաւ, քաղաքապետութեան ու կառավարութեան բարձրաստիճան անձնաւորութեանց և մանաւանդ զանազան հասարակութեանց կողմէն:

Սակայն ուրախառիթ է տեղիս հայ հասարակութեան համար պատիւը զոր Ն. Բ. Խտիվը ըրած է Վսեմ Աբրահամ Բարթող պէյի, խտիվական կառախումբը Տէսունէսի առջեւէն անցած ատեն: Անկից քաջուած է հետեւեալ հեռագիրը զոր նոյնութեամբ կ'արտագրենք ԼԱ ՌէժՕՐՄ Էն:

ՏԷՍՈՒՆԷՍ ժամը 9. 15

Առաւօտեան ժամը 8. 12 ին անցնելով Ն. Բ. Խտիվին մասնաւոր կառախումբը, կանգ առաւ Տեսունէսի կայարանին առջեւ որ Նորին Վսեմութեան Սբրահամ Բարթող Պէյի ինսալով յասկապէս դրօշազարդուած երձեղօրէն. հոն կեցած էին գիւլին երեւիլ-

ները, Ապու - Հումուսի ոսիկանապէսը, օմսեներն ու կալուածատերերը:

Իսկ Ն. Բ. Խտիվուհիին մասնաւոր կառախումբն անցաւ ժամը 8. 42ին:

— ՄԱՀԱԳՈՅԺ. — Կովկասէն զըրկուած նամակէ մը խորին ցաւով իմացանք մահը Թիֆլիզի քաղաքապետ ՏԻԱՐ ԳԷՈՐԳ ԵԻՍՆԳՈՒԼԵԱՆԻ, որ 58 տարեկան, սրտի հիւանդութենէ կը մեռնի յանկարծամահ, բազնիքի մէջ, դէռ լողարանը չը մտած, Սեպտ. 29ին:

Յուզարկաւորութիւնը կատարուած է արտակարգ շքեղութեամբ, Հոկտ. 3 ին, որուն մասնակցած են, բաց 'ի հայ եկեղեցական դասէն ու բազմամբոխ հասարակութենէն, նահանգապետական ու քաղաքային իշխանութիւններն ու պետական ուրիշ բարձր անձնաւորութիւններ:

Տ. Եւանդուլեան, թէ և շատ քիչ ապրեցաւ, քաջածանօթ է սակայն իր մատուցած կարևոր ծառայութիւններով աղագային, վարչական ու քաղաքային պաշտօններուն մէջ, զոր վարած է ա՛յնքան ձեռնհասութեամբ ու յաշողութեամբ:

Մեր ամենախորին ու անկեղծ վըշտակցութիւնները:

— ԼԷՈՆ ՄԱՐԻՅԱԻԼԻԻ մահը կը գուժէ Բրօ Արմէնիա իր 25 Հոկտ. ի թիւով: Մեր ազգը մեծ ու դառն կորուստ մը կ'ընէ Փրանսայի այս ազնիւ զաւակին մահովը: Բրօ Արմէնիաի աշխատակից, մին եղաւ առաջիններէն, որ 1896 ին — մինչդեռ Փրանսան ու բովանդակ Եւրոպան մեղսակից լուսթիւն մը պահեցին Սուլթանին ռճիրներուն հանդէպ — հրապարակային բանախօսութեանց մէջ խայտառակեց թրքական բարբառոսութիւնները: Ի՛նք եղաւ մին հիմնադիրներէն Փրանզօ-Հայկական Գօմիթիին, ընկերակցութեամբ Տեարց Էրնէսդ Լավիսի, Բօլ Վիօլլէյի, Հայր Շարթմանի և Երէց Մօնիյէի: Յուցահանդէսին ատեն Խաղաղութեան Ընկերութեանց Գօնկրէին մէջ քուէարկել

տուաւ մեր նահատակ ազգին 'ի նը-
պաստ ազգու որոշումներ, ու դեռ վեր-
ջերս Հայկական Հարցին վրայ բանա-
խօսութիւն մը կ'ընէր Գիտուն Ընկե-
րութեանց Հիւրանոցը:

Պիտի ապրի յաւիտենապէս այս
մեծ հայասէրը սրտերուն մէջ անոնց
որ զինք ճանչած են ու սիրած. պիտի
ապրի նա, մանաւանդ երախտագէտ
հոգիներուն մէջ իր հեռակայ համա-
կիրներուն ու պաշտողներուն:

— Կ. ՊՈԼՍՈՅ ՖՐԱՆՍ. ԴԵՍՊՈՒՆԱՏԱՆ
ԳՈՐԾԱԿԱՏԱՐԸ Պարս, մերժած է ըն-
դունիլ Միւնիք պէյը, որ կը պարծի
եղեր թէ ինք է կարգադրեր անոր
հետ Լօրանտօյի գործը: Պարս անոր
խմացուց նաև որ անդամ մ'ալ Դես-
պանատունը ոտք չը դնէ, միայն
Թէվֆիզ բաշայի հետ ինք ուղեւոր
բանակցիլ:

— ՄԱՆԱՍԻՐԻ Ֆրանս. փոխ-Հիւ-
պատոսին միջազգային առթիւ Բ. Դուռը
լիովին գոհացում տուաւ. Ֆրանսայի:

— ՊԵՐԼԻՆԷ 28 Հոկտ. ին քաշուած
հեռագրի մը համաձայն, Կ. Պոլսէն կը
ժանուցուի թէ՛ Ազրիանուպօլսոյ վա-
լին, Արիֆ բաշա, Կ. Պոլիս կանչուե-
ցաւ փոխանորդելու Մեծ-Վէզիրին,
որ հիւանդ է: Արիֆբաշան ազատամիտ
մարդ մ'է և քրիստոնէից բարեկամ:

Դարձեալ նոյն հեռագիրը կ'ը-
սէ թէ՛ Բ. Դուռը Ֆրանսայէն ընդու-
նած է ամենակծու ծանուցագիր մը,
գրեթէ վերջնագիր մը (Ultimatum) ո-
րով կը հաստատուի թէ՛ Թուրքիոյ դէմ
ո՛չ միայն Ֆրանսան կը գտնուի, այլ եւ
միւս տէրութիւններն ալ, որոնք օգ-
տուելով ներկայ պարագայէն պիտի
զտոզտո, համաձայնութեամբ, մէջտեղ
դնեն իրենց պահանջները:

Իսկ Թուրքիա ցոյց կուտայ շեշտել
Գերմանիոյ հետ իր բարեկամութիւնը:

— Սուլթանն իրատէով մը արգի-
ւեր է Ֆրանսայէն դաղթող կրօնական
միաբանութիւններին գալ Թիւրքիաի
մէջ հաստատուիլ:

— Սէլանիկի վալին արգիւեր է Սա-
լոնիկի քարափեերի Ֆրանսական ըն-
կերութեան իր հոգային արտօնութիւն-
ները գործադրել և արգէն հաստատ-
ուած տուրքերը պահանջել:

— Մեծ-Եպարքոս Բիֆաթ փաշայի
առողջական վիճակը յուսահատական
է: Կըսուի թէ վարչական մեծ փոփո-
խութիւններ պիտի լինին: Մի քանի
օրէ 'ի վեր, սուլթանն ամեն օր 3 ժա-
մի չափ կը խորհրդակցի Քիւչիւք Սա-
յիս փաշայի հետ որ երբեմն Մեծ-Ե-
պարքոսութեան պաշտօն վարած է եւ
որ Սուլթանին ձեռքէն անգլիական
դեսպանատունը փախչելով ապաստա-
նելէն եւ հարկ տեսած ապահովու-
թիւնն ստանալով դուրս ելնելէն յե-
տոյ, քաշուած կեանք մը կը վարէ
անպաշտօն:

— Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ
Մակեդոնիաի մէջ տեղական իշխանու-
թիւնները 7 պուլկար սպայներ ձեր-
բակալեր են որոնք գիւղացիի կերպա-
բանքով ծպտած, լեռների գլխաւոր
կիրճերի տեղագրութիւնը կը գը-
ծէին: (ԱՐՄԷՆԻԱ)

— ԾՈՎԱԿԱԼ ԴԱՅԵԱՐ Ի նաւատորմը
նոյ. 5ին Միտիլլիի առջև խարխիս ձը-
գած, ու Ֆրանսական կառավարութեան
կողմէն զրկուած հրահանգին հետևե-
լով, ցամաք հանած է զօրքերն ու
զբաւած՝ երեք նաւահանգիստները: Նա-
ւատորմը տեղէն պիտի չը շարժի մինչև
որ լիուրի գոհացում չը տրուի Ֆրան-
սական պահանջումներուն:

— ԹԱՅՄՁԻ զիմացընեն Բարիզէն
թէ՛ հիմակուրնէ շատ մը Ֆրանսացիներ
մտքերնուն կ'անցընեն թէ՛ Միտիլլի
Ֆրանսական նոր Կիպրոս մը պիտի ըլ-
լայ քիչ ատենէն, ու պիտի իշխէ
ո՛չ միայն Տարտանելի, այլ և Արևել-
քին ու Վուէզի Չրանցքին: Միտիլլի
100,000 Յոյն, 12000 Թուրք բնակչու-
թիւն ու 3 կարևոր նաւահանգիստ ու-
նի, կը տեղագրէ ԹԱՅՄՁ:

— ՖՐԱՆՍԱՆ կը յայտարարէ թէ՛
դիտում չ'ունի մշտական տիրապետու-
թեան ի Միտիլլի, և ոչ ալ երկրա-
կալութեան:

— ՍՈՒԼԹԱՆԸ կայծակի արագու-
թեամբ կ'արձակէ 16 եկեղեցիներու,
վանքերու և կրօնային հաստատու-
թեանց վերաշինութիւնն ու նորոգումը
արտօնող իրաւէ մը. սակայն Ֆրանսան
անգրդուելի կը մնայ իր պահանջնե-
րուն մէջ, որոնց վրայ նոր յաւելում-
ներ ըրած է վերջերս: —

ՈՐԲԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պատուարժան

Տեղեկ-խմբագիր «Փիւնիկ» Շաբաթա-
բերթի:

Աղեֆասևորիս

Ընկերութեանս տարեկան Ընդհ. ժողովոյ Սեպտ. 15 ի գումարումով ինչպէս նաև Ազգ. Բաղ. Պատ. ժողովոյ Հոկտ. 2 ի նստով վաւերացեալ, շրջանաւարտ Գործ. ժողովոյ երկամեայ հաշուեկշիւին՝ և անոր յարակից Նոյն Պատ. ժողովոյ կողմէ գիւանին ուղղեալ նամակին օրինակները ներփակեալ յընդամենը 2եզ, կը խնդրենք անոնց հրատարակութիւնը Պատ. Փիւնիկի մէջ, ի գիտութիւն Աղեքսանդրէսեանակ ազգայնոց և նուիրատուաց:

Տեղեկագիրը յառաջիկային առանձին տետրակա պիտի տպագրուի որբերու պատկերներովը միասին, երբ անոնք հասնին մեզ:

Մնամք Յարգանքով

Ընդհանուր ժողովոյ

Բ. Ասեմապիւր

Ա. Տեմապե

Կ. ԵՐԶԵԿԱՅԵԱՆ

Մ. ՊԱԼԸԳՃԵԱՆ

ՊԱՏՃԷՆ ԲՆԱԳՐԻ

Գահիրէ 7 Հոկտ. 1901

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԵԳԻՊՏՈՍԻ

—o—

ԴԻՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

Ազգ. Գաւառ. Վարչութեան

Թիւ 205

Մեծապատիւ

Տիար Ասեմապե Պատ. Ընդհանուր ժողովոյ «Որբասիրաց» ընկերութեան Հայոց.

Ի Գահիրէ

Մեծապատիւ Տիար

Ստացած և Ազգ. Գաւ. Վարչութեան Պատ. Բաղ. ժողովոյ ուղարկութեան

ներկաւ, եւ Պատ. Դիւանիդ 25 Սեպտ. 1901 թուականօք, թիւ 10|5 և 11|6 երկու պաշտօնագրերը, որոց առաջնով Առաջնորդարանիս կը մատուցանէիք ընկերութեանդ շրջանաւարտ Գործադիր ժողովոյ երկամեայ գործառնութեանց տեղեկագիրն ու հաշուեկշիւը, վերջինն երկու օրինակի վրայ, որք վաւերացած էին Ընդհանուր ժողովոյ տարւոյս սեպտ. 15 ի նիստին մէջ, իսկ երկրորդ գրութեամբ կը հաղորդէիք ժողովոյդ նորընտիր Դիւանին և Գործադիր ժողովոյ անդամոց անուններն ի գիտութիւն:

Ժողովը տեղեկագրի պարունակութենէն գոհութեամբ վերահասու եղաւ ընկերութեանդ բարւօք վիճակին, ինչ որ հաղորդուած էր արդէն իրեն բերանացի, ընկերութեանդ Սեպտ. 15 ի Ընդհանուր ժողովոյ նիստին՝ վարչութեանս կողմէ ներկայացուցիչ կարգուած Տիար Ն. Մ. Աղազարմի կողմանէ: Ժողովը կը գովէ ընկերութեանդ պաշտօնական մարմնոյ անդուլ ջանքերն որբասնամ գործին յառաջացման համար:


Ժողովը դարձեալ իր ամսոյս 2 ի նիստին մէջ յետ քննութեան վաւերացուցած ըլլալով ընկերութեանդ երկամեայ հաշուեկշիւը, անոր մեր կողմանէ հաստատուած մէկ օրինակը այսօր կը վերադարձնենք Ձեզ:

Կատարեալ յաջողութիւն մաղթելով ընկերութեանդ ազգօգուտ նպատակին և ողջունելով զՁեզ հայրական սիրով,

Մկան աղօթարար

Առաջնորդ Եգիպտոսի Հայոց

ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ՀԱՇՈՒՆԿՇԻՌ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Սկսեալ 1899 Մայիս 1էն ց'վերջ Ապրիլ 1901

ՄՈՒՏՔ

Եզրայ. ողջ

Ընկերութեան անդամներու բաժնեգներէ գոյացած՝ 1899 Մայիս 1 է ց'վերջ Դեկտ. 1899	1100
1900 Յունվ. ց'վերջ Ապրիլ 1901 բաժնեգներէ	5251
ԶԱՆԱԶԱՆՆԵՐԷ ՆՈՒՒՐ Տիար Մամաս Թերզեանէ	964, 35
Օմսուրմանի ազգայիններէն Առաջնորդարանի ձեռնամբ	600
Հալճա եղած հանգանակութեան արդիւնքը	4100
Վալֆէր Մէյնարաֆի վահառասունէն (ամանորի առքի)	500
Ֆրանսական Ազատ Ռումադրաց Ընկերութեան Գահիրէի մասնաճիւղէն	1200
Վ. Գրիգորեան եւ Մ. Թէվէէլեանի ձեռամբ Նեստրի գործարանի պատշտեաներէն իբր կադանդչէֆ որբերուն	159
Կրէտի (Գանժիա) ազգայիններէն Պ. Բիւզանդ Խաչիկեանի ձեռամբ	135
Այլեայլ ազգայիններէ	1109, 85
Եզրայ. Բրէտի Ֆոնսիէի պարտատուներու 1900 Մայիսի կտրոններ	57, 80
Գեր. Ս. Առաջնորդի լուսանկարներէն գոյացած	

Խառն հասոյթ	545
1900 Ապրիլ 7ի թասերական ներկայացման տուներէն գոյացած գուտհասոյթ	4215, 65
Այս առքի եղած նրւերներ	1810
Համագումար	21747, 65

ԵԼՔ

Եզրայ. ողջ

Ընկերութեան համար գնուած կնիք, թամբոն, գոբի մեքենայ 12 տետրեր եւ այլ առարկայից արժէն	297, 50
1000 օրինակ Կանոնագրի սպագրութեան	539
Գեր. Ս. Առաջնորդի 62 օրինակ լուսանկարի պատաստութիւն եւ ծախս	421
Ընկալագրերու, նամակաթղթի, քաղաքականներու, Արաբիք ղրկուած 60 լիւրայի գովաբան, թուղթի, թերթի, փոսթի, մելանի եւայլն ծախքեր	848, 90
Հաւաքի իրաւունք	450
«Արշալոյս» լրագրի յայտարարութեանց համար (")	200
Հալճա ղրկուած սպագրեալ քաղաքականներու տուար, թերթ, հեռագիր, եւ սպագրեալ ընկալագիրներու ու փոխադրութեանց ծախս	620, 40
Այս առքի գրական պատաստութեանց վարձատրութիւն	97, 50
Կիպրոսի Ազգ. Կրթարան Որբանոցին ղրկուած	1560
Ընկերութեան Արաբիքի Որբանոցին մէջ պատշտեանած 10 որբերուն 1900 Դեկտ. 1է ց'վերջ Նոյեմբ. 1901 մէկ տարեկան թուակը ղրկուած	4387, 50

Պատկանեալ 10 որբե-
րուն նախնական ծախուց
համար դրկուած 877, 50

1901 Յունվարի (նոր
սարույ առթիւ) որբերու
դրկուած իբր կաղնղչէք 157, 50

Պատրաստի ընկերութեանս
գնած սասը Եգպս. Քրէտի
Ֆոնսիէի պատրաստուողակ-
ները, որ տեղոյս Ազգ. Ա.
նաշնորդարանի մէջ ի պահ
դրուած են 10210, 50

Ժողովոյս Տիար Գան-
ձապետին քով հնչուն քրամ 1080, 35

Համագումար 21747, 65

Գահիրէ 31 Յուլիս 1901

Վասն նշանութեան կ'ստորագրենք

Դիւան Գործ. Ժողովոյ

Ա.Սեմադպիւր Ա.Սեմապետ

Ա.ՊԱՀ ՊԵՅՐՈՍԵԱՆ Ա. Մ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հաւուակալ Գանձապետ

Կ. ՇԱՀՐՈՂԵԱՆ Կ. ԵՐՁՆԿԱՅԵԱՆ

Խորհրդականք

Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Կ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Ընկերութեանս Պատկ. Ընդհ. Ժո-
ղովոյ 2115 Սեպտ. 1901ի նիստին մէջ
վաւերացուած է սոյն հաւուակեւորը,
որոյ ի հաստատութիւն կ'ստորագրենք:

Ընդհանուր Ժողովոյ

Ա.Սեմադպիւր Ա.Սեմապետ

Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ Մ. ՊԱՆԳՅԵԱՆ

Թիւ-207-սոյն հաւուակեւորը վա-
ւերացուած է Ազգ. Գաւառ. վարչու-
թեան Պատ. Քաղ. Ժողովոյ 1901 Հոկտ.
2ի (Ն. Տ.) նստին մէջ:


Առաջնորդ Եգիպտոսի Հայոց

ՅՈՎԱԾՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Կնիք Առաջնորդարանին)

Գահիրէ 1901 Հոկտ. 7

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ



Եթէ նկատուած է մէկը, նկատուած է
ամբողջ մարկութիւնը: ԼԱՍՍԱԼ

Իրատունքն ալ իւր բարկութիւնը ու-
նի, եւ իրատունքին բարկութիւնը յա-
նաշնորդութեան տարբերէն մէկն է:

Մ. ՇԱՌԼ

Երբ վաստակիւնքն եւ ապերախսին
ներես, այն ժամանակ կը ցուցնես ա-
նոր՝ քու անկից անելի արժեւոր:

ՇԱՌՕՆ

Մարդուս մեծութիւնը եւ կարո-
ղութիւնը ընկերութեան մէջ է. մարդս
միայնակ, ինքնըստինքեան ոչինչ է,
բայց հասարակութեամբ ամենակարող
է. իսկապէս նրաւագործ է:

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ

Ընկերական գաղափարի կատարե-
լապէս իրագործութեան անհնարաւո-
րութիւնը այս աշխարհիս մէջ, երբէք
չ'պէտք է դադարեցնէ ձգտող մարդերի
գործունէութիւնը, ամեն արգելադրի,
ամեն խափանարկու պատճառ, պէտք
է աղբիւր եւ շարժադր լինի գործու-
նէութեան - մի նոր գործութեան:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ

Օրհնեալ է պայտարը, թող լինի
նա հզօր, անխնայ, ազնիւ եւ բարե-
խիղն: Նա, որ փախչում է պատե-
րազմից, մարդ չէ բարոյապէս, այլ
մի թուաւտ արարած, կենսամարդի բնա-
ւորութեամբ: ՆՈՅՆ

Այն որ նախասինքի մը դիրաւ կը
ներէ, երբէք չ'պիտի կրնայ ծառայու-
թիւն մը գնահատել:

Աւելի կ'անարգեմ այն մարդը՝ որ
նախասինքի մը դիրաւ կը ներէ, քան
ան մարդը՝ որ բնաւ չի ներէ:

Շ. ՇԱՐԷՅ

Ո՛հ, ի՞նչ հրէ՛ է այն մարդը՝ որ
ապերախի մը կերպարանով կերեւի:
ՇԵՅՔՍԲԻՐ

ԵՐՐՏԱՍՍԱՐԴՈՒԹԻՒՆ

Ա. Բ. ին

Անդունդի մը եզերքէն, ուր կը ինքնաշնչեմ
երբ դեռ վերն ենք, կը վագր կեանքի ու
դիմ կեդ; անհարք.
Մեր քայլերը դողողուն կը հետեւին ան-
գիտակ
Ապագային, կը սպասենք ժրպիտներու, բոյ-
րերու:

Ո՛հ այն ուղիին փրշալից, միշտ արգելներ
կան ցրցուած,
Հոն կը պատեն մեզ սակաւ, իծերու պի՛նդ
գրկուումով
Խօ՛ջ տեղանքները արտին, հո՛ն կրկեր վաս,
աղտոտ,
Կը մաշեն մեզ, կը բաղանակ իյնալ լիհիւ
մեջ յոգնած:

Այն անդունդին եզերքէն ձեռքեր փափուկ
սպիտակ
Մեզ ծաղիկներ կարկանտեն, անոնց բոյրերն
հեշտակով
Կ'զգոյնեն մեզ, եւ քեր գիրգ, ձիւնափայլ,
հոյակի.
Կը քաշեն մեզ՝ մեղկացած խորութեան մեջ
սեւ հաւակ:

Ա՛յս ակամայ ես մօտեն իյնողները կը դիտել
Այնքա սուղին մութին մեջ, կը սարսուղ
պժգակով
Մե՛ւ ըսուներեն կը վագեն, կը գալարուին
կը ցնդին,
Կը կորսուին սերին մեջ, կը շարի սիրտ
անոնց դիմ:

Անդունդի մը եզերքէն, ուր կը ինքնաշնչեմ
երբ դեռ վերն ենք, կը վագր կեանքի ու
դիմ կեդ; անհարք.
Մեր քայլերը դողողուն, կը հետեւին ան-
գիտակ
Ապագային, կ'սպասենք ժրպիտներու բոյ-
րերու:

Մոռնալ սա կեանքը տղուս. միշտ վերանալ
բարձրանալ,
Իտալի քեւերով, անոր յոյսով կուրացած,
Չը տեսնել ո՛չ մի ուղի, մոռնալ անդունդին
այ անեղ,
Եւ անյողողող կոխոտել կրկեր, տեղանք,
ան՛նն ալ,
Լինել մարմինը, չոր նիւթ, կրկերու բոյն ու
դիտել
Գալարումները անոր, անոր հասնումն օրէ օր,
Չուր ջանները ընկճելու, մաքուր, անհուն
ձգնումներ,
Յաղթող հոգւոյն ժպիտը, բերկրութիւնը
վայելել,
Եւ երբ հասնի ալ ճամբան, տեսնել այ՛քե՛ր
գոյգ մը վառ,
Հոգի մ'անքիծ գոցս շուշան հրեշտակ մը
կոյս յուսադիւ,
Ու սիրել զայն խեղդի պէս, սիրած ըլլալ
զայն միայն,
Անոր գրկին մեջ միայն ճանչնալ հեշտակ
հաւքոյր, սեր,
Ահա երկինքը կեանքին, ահա՛ երազն իդ-
ձերուս:
* * *

Հետեւեալ երկու քրթակցութիւնները
կը յանձնարարենք պատ. ընթերցողաց ու-
շադրութեան:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԲ

Գահիրէ, 4 Նոյեմբեր 1901

Տէր Խմբագիր «Փիւնիկ» Շաբաթաբերթի
յ'Աղեփասանդիս

Յառաջիկայ ուրբաթ 8 Նոյեմբեր,
Պատկ. Գաւառ. Ընդհ. ժողովն ի նիստ
հրապարակուած է Ազգ. Առաջնորդարա-
նում՝ նախագահութեամբ Գեր. Յովսէփ
Եպիսկոպոս Այվազեանի եւ Ասեմա-
պետութեամբ Վսեմ. Տիգրան բաւա-
ս'Ապրոյի. Աւելորդ է ըսել թէ ան-
նուս այ՛ն յառած է Նորին Վսեմու-
թեան (եւ ո՛չ թէ Ս. Առաջնորդին վե-
րայ, որ եզրապատ ժամանած օրէն
ցայս վայր բնորո՛ւ ալ յուսախաբ ըրած
է), որ իբր նոր Աղեփասանդ Մակեդո-
նացի՝ լիայոյս եմք որ վճարաբար՝ Ազ-

գին շահեր եւեթ կէ՛ս նայասակի ունե-
նալով, միանգամ ընդ մի՛ս ժողովին
լուծել պիտի Տայ հանրածանօթ գորդ-
եան հանգոյցները, որով թէ՛ ամէն հայ
անհաս զոհ պիտի մնայ եւ թէ՛ Մայրա-
բաղափիս Ազգ. գործերը պիտի դադրին
Աղեփանդրիոյ Տխուր համապատկերը
ներկայացնելէ։ Այս մտօք մերագնէից
ողջամիտ եւ բանիբուն մասն սկսած է
արդէն ստորագրել՝ ճրանսերէն լեզուա՛
հանրագիր մը, զոր մտադիր է Ն. Վ.
ներկայացնելու։

Ձեր Պատ. «Փիւնիկ»ի սիւնակները
չ'են ներեւ սոյն հանրագիրն ամբողջու-
թեամբ հրատարակել. սակայն, կար-
ծեմ թէ շահեկանութենէ զուրկ չ'են
հետեւեալ մասերը.

«Ահաւասիկ մեր ցաւերը.

1. — Ազգ. գործերն առ հասարակ
խիստ հեռի են նախանձելի հանգա-
ման մ'ունենալէ. անուշ զա վերագ-
րելի է վարիչ իշխանութեանց կա՛մ ան-
կարողութեան եւ կամ անհոգութեան։
Արմասական փոփոխութիւն մը բացար-
ձակապէս անհրաժեշտ է. զայս ջեր-
մագին Ձեր որոշման կը յանձնարարենք։

2. — Ազգ. վարժարանի այժմու հո-
գաբարձութիւնն իւր պարսկանու-
թեանց մէջ թերի է, խիստ թերի. ի
նկատի ունենալով սոյն ուսումնական
հաստատութեան արդի անմախանձելի
վիճակը, համարձակօրէն կրնանք ըսել
որ Պ. Հոգաբարձուներն իրենց պաշ-
տօնին անձիքը չեն, եւ պէ՛տ է անյա-
պաղ փոխութիւն։

Գաղափար մի եւ եթ Տալու հա-
մար իրենց պաշտօնավարութեան վերայ,
յիշենք միայն սա թէ՛ ի՛նչպէս առանց
ո եւ է արդարանալի պատճառի՛ կ'ուզեն
պաշտօնէն հեռացնել Դաստիարակուհի
մը, որ իւր անսգիտ վարուք ու ան-
խոնջ ջանասիրութեամբն բոլորիս հա-
մարումը շահած է։ (1)

(1) Պ. Թորակիցն իր նախորդ նամակին

Վարժարանի խնդիրը, Վսեմաւոք
Բաւա, խիստ կարեւոր է. ամսական
պիտեմէն գրեթէ 60-70 Եգիպոս. ոսկի
է. ուրեմն ինչո՞ւ չգտնուի այն՝ միեւնոյն
աստիճանի վերայ, ինչ որ են միւս հա-
մանման հաստատութիւններն։ Բարե-
բաղդաբար այժմ մեր Ազգին մէջ չեն
պակսիր լաւագոյն ուսումնարաններէ
երջանաւարտ երիտասարդներ, որոնք ի
մեծ զոհումակութիւն ամենու՛ս կարող
են նպաստաւորապէս այժմու հոգաբար-
ձութեան տեղն անցնիլ։

Անցեալ Յունիս ամսուն այս մտօք
բազմաթիւ ստորագրութիւն կրող հան-
րագիր մը մատուցած ենք վիճակիս Ս.
Առաջնորդին՝ Պատկ. Քաղ. ժողովոյ
փոխանցելու համար, ցաւ ի սիրտ կը
յայտնենք որ ցարդ ո՛ր եւ է հետեւութիւն
չտուեցաւ ժողովրդեան սոյն ձայնին։

Վստահ որ Ձեր Վսեմութիւնն իւր
բարձր հոգածութեան առարկայ ըրած
է Ազգին շահերը,

Պատիւ ունիմք եւն.

Ստորագրութիւնք. »

-- Մի բանի օրերէ ի վեր Մայրա-
բաղափումս մեծ ոգետրութիւն կը տիրէ
արժանաւայել ընդունելութիւն մ'ընե-

*մէջ կը յայտնուի թէ՛ այդ Պ. Հոգաբարձու
տղայները՝ կը պարծենան եղեր որ իրենց
հեռացուցեր են եղեր պաշտօնէն Անզ. Ու-
սուցիչ Տիար Գարեգին Եսայեանը. միևնոյն
իրողութիւնը սա՛ է թէ՛ յիշեալ ուսուցիչը,
որ քանի՛ քանի պատեհ առիթներով ցոյց
տուած է իր ձեռնհասութիւնը, վկայութեանը
նոյն իսկ անգլիացի կարեւոր անձնաւորու-
թեանց— անխնայ առաջ Վսեմ. Պողոս Բաշա
Նուպարի հաղորդած է վերանուշիկ հրա-
ժարելու իր դիտարկութիւնը, ա՛յ յուսահա-
սած ըլլալով վարժարանին բարեկարգութե-
նէն եւ անկարելի զտնելով իր պաշտօնավա-
րութեան օգտակարութիւնը. ու երբ ինք ու-
զեր, դարձեալ կրեար շարունակել նոյն
պաշտօնը, հակառակ յիշեալ երկու տղայ հո-
գաբարձուներուն իրեն դէմ սնուցած հա-
կակրութեանը։*

Մ. Խ.

լուՆ. Բ. ԽՏԻՎԻՆ, անցնելիք հանապարհներն յաղբական կամարներով ու գոյնգոյն դրօշակներով զարդարելով: Տեղական օտար քերթերը մանրամասնօրէն ամէն ինչ օրն օրին կը նկարագրեն, եւ մերայինք ալ արդէն զայնս կարդացած կը լինին: Այս առթիւ քանի մը ժխտութեամբ կը յանախեսնէ կը յանախեսնէ մեքիս մէջ, զորս աւելորդ չեմ համարիր «ՓԻԻՆԻԿ»ի ազնիւ ընթերցողաց ներկայել:

Ընդհանուր սովորութիւն մ'է յեգիպոսու որ Ն. Բ. երբ որ ժամանէ Մայրաքաղաքս՝ իւր բարձր ներկայութեան կ'ընդունի բոլոր հասարակութեանց կրօնական պետերը. ի հարկէ ի նոսա պիտի գտնուի եւ մեր Ս. Առաջնորդը: Կը խնդրենք ուրեմն Ն. Ս. է որ եթէ առիթն ներկայանայ, չմոռնայ Ն. Բարձրութեան առաջ բարեխօսելու Մուշեղ Գաբրիէլեանի սարաքաղոց ընկերին Նեան Զիմենեանի ի նպաստ, որ այժմ Թուրքիոյ հարահաններում Ափրիկեան կիչիչ արեւին տակ՝ կ'աշխատի սաժանակիր: Մենք քաջատեսակ ենք որ նոյն Ս. Առաջնորդին Ն. Բ. հետ իւր ունեցած առաջին տեսակցութեան մէջ ոսկեղէն առիթ մի փախուց, եւ այն միմիայն իւր *անասնաշխարհանը* պատահաւ: Առիթը չէ՛ր յայնժամ, Սրբազան. երբ երկրին վեհապետն ցաւ կը յայտնէր Ձեզ՝ Մուշեղի խնդրոյն առթի՛ր՝ բերանբաց երեսը նայեցաք, փոխանակ միջնորդելու անոր ընկերոջ համար:

Երկրորդ, խորհուրդ կուտանք Ձեզ, որ եթէ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ իւր ծանօթ առասանեմութեամբն Ազգ. Բարեգործական նպաստակի մը համար դրամական կարեւոր նուէր մը յղէ յԱզգ. առաջնորդարանն, պէ՛տ է երկտողի մի փութալ շնորհակալ լինելու Պարգեւատիւն. զայս կը պահանջէ ե՛ւ քաղաքապետութեան սարակական սկզբունքը. պէ՛տ է, ըսել կ'ուզեմ, կրկնուի անցեալ զարման ժխտութեամբ միջադէպը. գուցէ զայն մոռցած էք, Սրբազան, իբր Ազգի մի

անհաս ահա՛ կուգամ յիշեցնել Ձեզ անցեալը:

Կը յիշէք անուշիկ որ Ձեր Գահիրէ ժամանելէն փոքր ինչ վերջը՝ Մայրաքաղաքս Ռեքայանամ Ընկերութիւններն միացեալ պատուիրակութեամբ մը Ձեզ դիմեցին եւ Ձեր միջնորդութիւնն խնդրեցին Վսեմ. Տիգրան Փաշայի քով՝ որ հովանաւորութեան ներքոյ առնէր ԽՏԻՎ. Օրբայում յօգուս մեր որբերու տնօրէնի բաւերական ներկայացումը, Դուր, Սրբազան հայր, շարաքներով ձգձգեցիք այդ խնդրանքը. ուր ուրեմն, եղած տաղկացնող դիմումներէն (քանի որ այն պատուիրակութեան անդամները խօսք հասկցող տեսակէ չէին) Ձեր գրութիւնն ազատելու համար՝ յանձն առիք գոհացում տալ՝ բայց այստեղ եւս ազգին օգտակար չկրցաք հանդիսանալ (ե՛րբ հանդիսացած էք որ...):

Ս. Յարութեան առաջին օրը երբ Ն. Վ. այցելութիւն տուիք (ի հարկէ Ձեր շահուն տեսակէտով) օտար այցելութեան քով խնդիրը նորին Վսեմութեան բացիք կէս բերան ու նորին Վսեմութիւնն ալ կէս բերան մերժեց: Իսկ Դուր պատահանութիւնը լիովին կատարած անձի մը գոհունակութեամբ՝ վերադարձաք եւ զայդ միջադէպ հանդարտեցիք Ռեք. պատուիրակութեան:

Այս է Ձեր գործունէութիւնն... բայց բարեբաղդաբար Ռեքայանամները Ձեր այն անհարակութենէն բնաւ չթուլացան. իրենք իրենց վերայ վստահ գիշեր ցորեկ աշխատեցան, եւ, իւր տեսակին մէջ դուն ուրեք տեսնուած քաւերական ներկայացում մը տնօրէնարեւելու արցունքը մեք որբիկներուն, որոնք եթէ Ձեր վերայ յոյսերնին դրած լինէին՝ սովամահ պիտի կորնչէին: Այս առթիւ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ Յանձնաժողովոյ մասնաւոր խնդրագրին վերայ, որ կը կրէր Առաջնորդարանի կնիքը, 20 անգոնակի նուէր դրկեց. անուշիկ զայս եւս կը յիշէք: Ռեքայանամներն խնդրեցին,

քախանձեցին Ձեզմէ, որ Ն. Բարձրու-
թեան շնորհակալական գիր մը դրկուի
Ազգին կրօնական պէտքն ստորագրու-
թեամբ. Դուք գայս եւս ամիսներով
ձգձգեցիք, մինչեւ որ խնդիրն բոլորո-
վին մոռացութեան տուեցաւ:

Ձայս ամէնն չ'մոռնանք, Սրբա-
գա՛ն, գոնէ Ձեր չֆնաղ ծառայութիւն-
ները ներկային եւ ապագային գործա-
ծեցէք: Եգիպտոսի Ազգ. սնտուկը Ձեզ
ամսական 20 Եգիպ. ոսկի կը վնարէ*,
որպէս զի յամենայնի իրեն օգտակար
եւ ձեռնտու լինիք, եւ ոչ թէ Ձեր քե-
ճիկն նայիք:

ԽԱՉՈ ՁԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պարում 22 Հոկտ. 1901

Այս շաբթուան մէջ ներսերէն յա-
շորդաբար հասած տխուր լուրերը կու-
գան հաստատել առելի վերագարձը
1894-1896ի Սև Թուականին: Նո՛յն
խժդժութիւնները՝ նո՛յն վայրերուն
մէջ, նո՛յն գահիճները՝ նո՛յն զոհերուն
գիմաց: Ահաւասիկ ինչ որ կրցայ մին-
չև հիմայ ստուգել:

Սասուն, Մուշ, Վան, Կարին սկը-
սած են նոր շարդերն ու տեւած՝ ան-
ընդհատ ԵՐԵՔ ՕՐ: Հաստատապէս չը-
կրցանք դեռ գիտնալ Չարդին զոհե-
րուն իսկական թիւը. ոմանք կը հաս-
ցընեն 2000 ՀԱՉԱՐԻ: Մուշէն՝ արժա-
նահաւատ ու կարեւոր ազգային մը կը
դրէ թէ՛ Սասունը սրէ անցընելէ ետք
ուրսուն երեք հոգի ալ սպաննեցին
Մշոյ քաղքին մէջ. պատճա՛ռ, Սասնոյ
Հայերը մերժած են իրենց քովը թըր-
քական զօրանոցներ կառուցուիլ: Այս

(*) Ի՞նչ կըրոյս, եպիսկոպոսի մը հա-
ւնար այդ անսարքակը մեծ բան չե՛.
բայց հարա՛մ բլլայ ըսել չը տարու մեջ է
հացութիւնը.:

Մ. Խ.

մերժումին վրայ, Համիտիկներու
գնդապետ Զէքի Բաշային հրաման կու-
գայ Սուլթանէն որ այդ ապստամբնե-
րու գեղերը սրէ անցընեն ԵՐԵՔ ՕՐ. . . .
Ա՛լ դուք կրնաք երևակայել թէ ին-
չե՞ր դարձած են այդ կողմերն ու ի՞նչ
կերպարան ստացած է ինդիւրը:

Ընդհ. Չարդին վրայ կը խօսուի
հոս ամեն օր. հրապարակին վրայ ուրիշ
խօսք չըկայ. Հայաստան, Հայաստանի
Չարդերը, Փրանդօ-թուրք միջադէպն
ու այդ միջադէպին վրայ զանազան
տարաձայնութիւններ: Յայտնի հա-
մարձակ կը խօսուի թէ՛ Փրանսան
դիւրին ետ չը պիտի կենայ այս գոր-
ծէն. թէ՛ Ռուսիան հետն է ու միշտ
հետը կը գործէ, եթէ գէպքերը պահան-
ջեն. թէ՛ Վեհ. Չարին ու Տ. Լուպէի
տեսակցութիւնը մեծ մեծ անակնկալ-
ներ պահած է իր մէջ. Լն. Լն:

Պաթումէն քանի մ'օր առաջ Սե-
բաստաբօլ դացի. երբ նաւահանգիստը
դրի ոտքս, տեսայ շատ մը Հայեր,
որոք խմբուած էին. մօտեցայ, տե-
սայ որ ամենքն ալ տրտում տխուր ի-
րարու երես կը նայէին. հարցուցի իրենց
տխրութեան ու համախմբումին շար-
ժառիթը. ի՞նչ պիտի ըլլայ պատճառը,
պատասխանեցին, Հայաստանը կրկին
սուրի քաշած են ու մենք հոս կ'ապ-
րինք դեռ. ի՞նչպէս կրնանք դեռ տա-
նել այս դժոխային կացութիւնը:

Սիրտս լեցուած, զատուեցայ խում-
բէն, շուտով ինքզինքս նետեցի մօտա-
կայ սրճարան մը, սկսայ թղթատել
թերթերը: Ռուսագան թերթ մը դի-
տել կուտայ թէ՛ եւրոպական տէրու-
թիւնները չ'են դարձընել ուշագրու-
թիւն հայկական Չարդերուն ու Հայոց
գահիճներուն գազանային բարբարո-
սութեանց: Կ'սպասուի որ դարձեալ
Ռուսիան կարգադրէ այս խնդիրը,
սահմանադրիւնն ներս խուժեն ուսա-
կան գնդերը, վերջ մը գնելու համար
այս կացութեան: —

Ս. Թ.

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
Ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Յ.մեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսագոր-Փոխասնորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մէնչիե Ապուսսուսսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանգ

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Յոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղորայք, սրէսխաղիքէներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն ինամեալ եւ արագ պատրաստութեան ու գիններու չափաւորութեան մասին:

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երևելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ԿԱԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին աւաւելութիւններն են. ծովեզերեայ օդ, ամենամաքուր սպաս, և ինամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլազան հանգամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Դիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատրը փողոցին մէջ, Ղազարեան Եղբարց Վաճառատան դիմաց. գնացէ՛ք, ճաշակեցէ՛ք ու տեսէ՛ք: